ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ **Սեղծագործական մտածողության և վերլուծական համադրական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին**

Կատարող՝ Նաիրա Պետրոսյան

Դպրոց՝ Արարատի մարզի Այնթապի Բյուզանդ Մարգարյանի անվան հ.2 միջնակարգ դպրոց

Առարկա՝ Հայոց լեզու, գրականություն

Կազմակերպություն՝ «Երևանի Լեոյի անվան հ.65 ավագ դպրոց» ՊՈԱԿ

Խմբի պատասխանատու՝ Անահիտ Զոհրաբյան

Երևան 2022թ.

Բովանդակություն

Ներածություն 2

Մաս 1 4

Մաս 2 5

Մաս 3 6

Եզրակացություն 13

Օգտագործված գրականության ցանկ 15

Ներածություն

Քսանմեկերորդ դարն իր բնույթով կարծրատիպեր կոտրող և «քառակուսուց դուրս» մտածողություն թելադրող ժամանակաշրջան է: Հարկ է, որ դպրոցահասակ երեխան սովորի դուրս գալ իրեն սահմանափակող մտածողության ստանդարտներից, մտածի ավելի բաց և լայնակողմանի: Բացի այդ, ներկայիս տեխնիկապես հագեցված, «տեղեկատվական գրոհի» ժամանակաշրջանում մեծ խնդիր է երեխաների համար հետաքրքրություն ներկայացնող ստեղծագործական մեթոդի ընտրությունը, և այն պետք է լինի նորույթ, պետք է հետաքրքրություն շարժի, հաճելի և գրավիչ լինի:

Ժամանակակից սոցիալական միջավայրի անորոշությունը պահանջում է ոչ միայն մարդու ակտիվությունը, այլև ստեղծագործական մտածողություն և ոչ ստանդարտ վարք: Մեր այսօրվա ստեղծագործ հասարակության ստեղծումը վաղվա նվաճումների ու հաղթանակների երաշխիքն է, լավագույն գրավականը:

Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է կարողանա նպաստել աշակերտի բազմակողմանի և ներդաշնակ զարգացմանը, ուսումնական գործընթացի արդյունավետ կազմակերպմանը :

Կրթության գերխնդիրը ստեղծագործ մարդ կերտելն է: Արդիական է դպրոցահասակ երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացումը, որից էլ բխում է նաև վերլուծական-համադրական ունակությունների զարգացումը:

Դեռահասի վարքագծում հաճախ դրսևորվում է կյանքում ինչ-որ նորի, սեփականի ներդրման ձգտում: Կա աշխարհի նկատմամբ այն վերաբերմունքը, որը նրան դեպի ապագան է մղում: Դրա արդյունքը լինում է այն, որ ծագում են առաջին անորոշ պլանները, երազանքները:

Այս տարիքում ձևավորված ինքնագնահատումը, որը կյանքի է կոչվում պատանու՝ իր նկատմամբ ունեցած պահանջի շնորհիվ, հաճախ կապված է այնպիսի

խնդիրների առաջադրման հետ, որոնց լուծումն անհնարին է առանց իրական, այսօրվա կյանքից թռիչքի և առանց դեպի երևակայող վաղը ունեցած մտքի ձգտման:

Պատանու ստեծագործական գործունեությունը նրա անձնավորության մտավոր, հուզական և կամային զարգացման ընդհանուր ու վառ ցուցանիշ է:

Դպրոցականների վերարտադրական ու ստեղծագործական երևակայության պատկերների ձևավորումն էապես կախված են ուսուցման կազմակերպման ձևերից ու մեթոդներից:

Մանկավարժի լավ զարգացած վերարտադրական երևակայությունն ուսումնական նյութը վառ, գեղեցիկ և պատկերավոր ձևով շարադրելու կարողության նախապայմանն է: Մանկավարժական վարպետությունը ենթադրում է ոչ միայն վերարադրական երևակայություն, այլև ստեղծագործական երևակայությունների առակայություն: Չափազանց անհրաժեշտ է, որ ուսուցիչը մոի աշակերտին դեպի ստեղծագործական գործունեություն, որից դուրս անհնարին է պատկերացնել իսկական ստեղծագործական երևակայության զարգացումը:

Հարկավ, դպրոցահասակ սերնդի կրեատիվ ներուժը մարդկության խնդիրները լուծելու համար է, հետագա սերունդների համար շրջապատող աշխարհը կառուցելու նախադրյալ, որտեղ նրանք կարող են ապրել ու արարել:

Հասկանալով խնդրի արդիականությունը՝ կարող ենք սահմանել մեր հետզոտության խնդիրը, այն է՝ ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացումը հայոց լեզվի և հայ գրականության դասերին :

Հետազոտության նպատակներն են՝

- բացահայտել դպրոցահասակ երեխաների մեջ ստեղծագործական մտածողությունը, վերլուծելու-համադրելու կարողությունը
- ուսումնասիրել հնարավոր մեթոդներն ու տեխնոլոգիաները,որոնք կխթանենդրանք:

Մաս 1

1. Ո՞վ է ստեղծարար մարդը

Ստեղծարար մարդը նա է

- ով ունի ինքնօրինակ, ոչ սովորական մտքեր, ծրագրեր
- օժտված է որոշակի էներգիայով, շրջապատին վարակում է եռանդուն բնույթով, նոր մտքեր է տալիս, ոգևորում՝ նոր գործեր սկսելու
- ինքնավստահ է, հավատում է իր ուժերին, վստահում է շրջապատին, ողջ աշխարհին
- չի վախենում հիմնախնդիրներ առաջադրելուց, ցանկացած իրավիճակում դրանք լուծելուց, անսպասելի լուծումներ տալուց
- ինքնօրինակ ձևով վերլուծելով ու համադրելով՝ կարողանում է իր մտածական որակները ծառայեցնել հանրային բարիքին:
- Անընդհատ և անընդմեջ սովորելու ձգտումը նման մարդկանց բնորոշ ևս մեկ գիծ է:

Ուշագրավ է Ջո Փոլ Գիլֆորդի՝ ստեղծարարությանն ուղղված հայեցակարգը, որն ունի հետևյալ 7 չափանիշները՝

- խնդիրները հայտնաբերելու և առաջադրելու ունակություն
- մեծ թվով խնդիրներ առաջադրելու կարողություն
- ինքնատիպություն, առաջարկվող կամ արտահայտված անսովոր, նմանը չունեցող, կաղապարից դուրս գաղափարներ, նորույթ, օրիգինալ և տարբերվող պատասխաններ հնչեցնելու ունակություն
- իմաստաբանական մտքի ճկունություն՝ օբյեկտի հիմնական հատկությունը որոշելու և այն օգտագործելու նոր եղանակ առաջարկելու ունակություն
- մտքի ճկունություն՝ առարկայի նկատմամբ վերաբերմունքը փոխելու ունակություն
- իրավիճակային ճկունություն՝ ըստ իրավիճակի, արագ և դիպուկ լուծումներ առաջարկելու ունակություն:

Թորանսը ստեղծարար գործընթացը բաժանել է

- խնդրի ընկալման,
- լուծումների որոնման,
- վարկածների առաջադրման, ձևակերպման, փորձարկման, փոխման,
- արդյունքը գտնելու փուլերի:

Մաս 2

2. Ինչի՞ց սկսել

- Կրթական միջավայրը փոխելուց
- Մեր մոտեցումները փոխելուց
- Նպատակադրումները փոխելուց
- Ուսուցիչ-աշակերտ թիմային աշխատանք իրականացնելուց

Առաջին նախապայմանն իրականացնելու համար կարելի է քարացած նստարանային դասավորության ձևը փոխել, որ երեխաները ոչ թե իրար ծոծրակ տեսնեն, այլ՝ դեմք, կարողանան երգել, պարել, խաղալ: Հնարավորության տալ դասը դրսում անցկացնելու՝ այգում, բակում, դաշտում: Ամեն աշակերտի այնքան լավ ճանաչել, որ յուրաքանչյուրի հանդեպ ցուցաբերել անհատական մոտեցում :

Երկրորդ նախապայմանի համար անհրաժեշտ է զարկ տալ աշակերտակենտրոն դասերին, որոնց ժամանակ երեխան վերլուծել-համադրելով ինքնուրույն եզրահանգման է գալիս, կարողանում է ավելի լավ ընկալել և ըմբռնել նոր նյութը :

Երրորդ հանգամանքը ունի որոշակի առանձնահատկություններ.եթե հայոց լեզվի դաս է, մեր առջև նպատակ չենք դնում, որ աշակերտն անգիր սերտի, օրինակ, հոլովական վերջավորությունները, խոնարհման պատկերը, այլ քերականական երևույթն ուսումնասիրելով՝ կարողանա ճիշտ կիրառել խոսքում:

Չորրորդ կետը իրականություն դարձնելու ճանապարհին կարևորում ենք, որ դպրոցը, ուսուցիչը, աշակերտը դառնան մեկ թիմ: Աշակերտ-ուսուցիչ-ծնող–համայնք. սա ևս մի մեծ թիմ է: Բոլորը միասին աշխատում են մարդ կերտել: Նման

մտածելակերպով կարող ենք թիմային աշխատանքի մշակույթ հաստատել, երեխային սովորեցնել աշխատել՝ կրելով պատասխանատվություն նաև յուրաքանչյուր օղակի համար: Աշակերտի ծուլությունը կործանարար հետևանքներ ունի թե՛ անհատի, թե՛ պետության զարգացման գործում: Աշակերտն ուսուցչին հավասար աշխատում է և պատասխանատու է իր ուսումնառության համար: Նա չպիտի նստի ու սպասի, որ իրեն բացատրեն: Աշխատանքի համար այնպիսի միջավայր է պետք ստեղծել, որ երեխան տուն գնա վաստակած: Ծուլությամբ մենք ստեղծագործ մարդ չենք կերտի:

Մաս 3

3. Ինչպե՞ս զարգացնել

Իրական կյանքում խնդիր լուծելու համար մենք դիմում ենք կա՛մ ուսումնասիրված օրինաչափությանը, կա՛մ մեր շրջակա աշխարհից նախկինում անհայտ օրիանկին: Վերջին երկու մեթոդներից օգտվելու համար պետք է կարողանալ դիտել, մտածել, ապավինել նրան, ինչ մարդը երբևէ տեսել, լսել կամ զգացել է: Այս բոլոր հմտությունները կարող ենք երեխաներին սովորեցնել դպրոցական դասերին :

Աշակերտը պետք է կարողանա ձևակերպել հարցեր, պատասխանել ուրիշների առաջադրած հացերին, ամենից հավաստի թվացող փաստերը քննել, վերլուծել, համադրել:

Հայոց լեզուն և հայ գրականությունը մեծ հնարավորություն են տալիս՝ զարգացնելու այս ամենը: Ցանկացած բան, որ թվում է՝ ամեն ինչ ասված է դրա մասին, կարելի է նոր հարցադրումներով ուսումնասիրել:

3.1 Աշակերտին պետք է օգնել «ինչո՞ւ»-ներով հարցեր ձևակերպել, առաջադրել ընկերներին՝ ցույց տալով սեփական օրինակը:

Օրինակ՝ Ինչո՞ւ հայերենում ունենք 7, ոչ թե 5 հոլով:

Ինչո՞ւ չունենք շնչավորի և անշունչի քերականական կարգ և այլն:

- Ինչո՞ւ ես այդ կարծիքին
- Ապացուցի՛ր
- Համեմատի՛ր

• Կարծիքդ ձևակերպի՛ր, եզրակացրու, ամփոփի՛ր։

Այսինքն՝ անընդմեջ «ինչու»-ների շարք լինի, և երեխան կարողանա ապացուցել։

Օրինակ՝ Ո՞րն է նորավեպի և պատմվածքի տարբերությունը, իսկ դու ինչո՞ւ ես այդ կարծքին։ Կանոն ասելուց հետո սովորողը պետք է արտահայտի իր կարծիքը, հիմնավորի։

Նկատելի է, որ նման առաջադրանքների ժամանակ աշակերտի միտքն աշխատում է, զարգանում է վերլուծելու-համադրելու կարողությունը։

Հոգեբաններն ասում են, որ կրթական գործընթացում պետք է աշխատեն աշակերտի գլուխը, սիրտը, ձեռքերը, ընդ որում՝ համաչափ և ստեղծարար։ Աշակերտը դպրոցական տարիքից պետք է սովորի ծառայել ընտանիքին, ընկերոջը, դպրոցին, հայրենիքին։ «Եթե դու հասկացել ես, բացատրի՛ր քո ընկերոջը, որը բացակայել է կամ լավ չի հասկացել»։ Այսպիսով՝ աշակերտը դառնում է ուսուցչի ընկերը։ Ոչ մի աշակերտ չի զլանա տված առաջադրանքը կատարել, եթե այն իր ուժերի սահմանում է։ Վստահում ենք աշակերտին աշխատանք կատարելիս։

3.2 Զվարճալի քերականություն

Հետաքրքիր մեթոդ է զվարճալի քերականությունը, որը մի քանի դրսևորումներ ունի՝

• Դատ

• Պաստառ

• Ներկայացում

• Հրապարակային ցուցադրություն

• Թռուցիկ

• Գովազդ

• Փոթքաստ

Օրինակ՝ դատ։ Ուսուցիչն ասում է, որ Ուղղական և Տրական հոլովները դատի են տվել Հայցականին, որովհետև վերջինս խլել է իրենց տարածքը, իսկ երեխաները հաճախ են շփոթում նրանց։ Աշակերտները պիտի ուսումնասիրեն քերականական

նյութը, կարողանան պաշտպանել կամ դատապարտել Հայցական հոլովին, ճիշտ որոշումներ կայացնեն՝ օգտագործելով խոսքի մեջ։

- Ներկայացում (տե՛ս հավելվածը «Դասապլան»)
- Գովազդի պատրաստում (օրինակ՝ ածականի գերադրական աստիճանի կազմություն, կիրառում)
- Պաստառ (Ճիշտ և սխալ...)
- Թռուցիկ (Հայերեն համարժեք···)
- Հրապարակային ներկայացում (կազմած գովազդը, պաստառը, թռուցիկը ամրացնել դպրոցի օատերին, տարածել սոցիալական հարթակում)
- Փոթքասդ

Քանի որ մեր դպրոցն ունի ռադիոցանց, կարելի է աշակերտներին հանձնարարել փոթքասդ ստեղծել քերականական որևէ երևույթի մասին։

Այս ամենն ապահովում է նաև գործնականություն, կարողանում ենք հետևել ճիշտ և գրագետ խոսքի կազմակերպմանն ու զարգացմանը։

3.3 Սխալների կատակերգություն

- Մի՛ վախեցիր սխալվելուց
- Համարձա՛կ եղիր, որովհետև սխալը սովորելու և աճի հնարավորություն է։ Երեխան չպիտի վախենա սխալվելուց. մարդը սխալական է։

Կարելի է, որ ուսուցիչը գրատախտակին գրի նախադասություններ թե՛ ուղղագրական, թե՛ բառագործածության, թե՛ ոճական-քերականական սխալներով, հանձնարարի աշակերտներին արտագրել։ 5 րոպե անց հարց ուղղի նրանց՝ արդյոք ճիշտ են գրատախտակին գրվածները. եթե այո՛՝ ինչու՞, եթե ո՛չ՝ ինչու՞։ Ժամանակ տա, որ մտածեն, բարձրաձայնեն և ուղղեն «ուսուցչի սխալները»։ Անշուշտ, ուսուցչի պարզաբանումներից հետո հետոճիշտ տարբերակները կլինեն գրված։

Կարող է ուղղակի իր կյանքից օրինակ բերել, թե ինչպես է սխալվել, հետո կարողացել է շտկել դրանք ու առաջ գնալ։ Սրանցով ուսուցիչը ցույց է տալիս, որ

սխալն ուղղելու ճանապահն անցնելիս ևս ամբարում ենք գիտելիքներ, հանդիպում նոր մեկնաբանությունների, գտնում ելքեր։

Պետք չէ երեխային սխալի համար դատապարտել։ Սխալը հաղթահարելու հմտություն պետք է ձեռք բերի աշակերտը, կարողանա ազատ մատծել և արտահայտվել։ Ցանկացած երևույթ համեմատելով, համադրելով, վերլուծելով՝ գալիս ենք եզրահագման. այն, ինչ մարդն ինքն է գտնում, դառնում է հմտություն ողջ կյանքի համար։

3.4 Գրականության դասաժամերին արդյունավետ են աշխատանքային թերթիկները, որոնք պետք է դասարանում լրացվեն աշակերտի կողմից։ Կարող են աշակերտներն իրենք կազմել, իսկ դասընկերները լրացեն, ստուգեն։ Մեկ դասաժամում կկարողանան գնահատվել բոլորը։

Օրինակ

Հարց	Պատասխան	Ստուգում
1. Ինչո՞ւ է վերնագրված «Սպիտակ ձին» և ոչ թե «Ցոլակը»։		
2. Ի՞նչ նմանություն ես տեսնում Գիքորի շորերը տանող Համբոյի և ձիերի սանձերն ու համետները շալակած գյուղ վերադարձող մարդկանց կերպարների միջև։		
3. Ի՞նչ զգացողություններով է սկսվում և ավարտվում պատմվածքը։		
4. Կարո՞ղ էին Բակունցի հերոսները խոսել գրական լեզվով։		
5. Դու՛ր գրիր 2 համեմատություն և փորձիր բացատրել		

3.5 Մտնել գրական հերոսի, կերպարի մաշկի մեջ կամ դեր ստանձնել։

Օրինակ՝

Պատկերացրու՛, որ դու Սամվելն ես, փորձի՛ր արդարացնել քո ծնողասպանությունը։

Կամ՝

Եթե Վասիլիկ դերում լինեիր, ի՞նչ կանեիր և ինչու՞։ Անշունչի դեպքում ևս կարելի է սա կիրառել։

Օրինակ՝

Ի՞նչ կգրեր գրիչդ քո մասին։ Կամ՝ Ի՞նչ կգրեր հեռախոսդ քո մասին։

Ցանկացած բան, որ կա մեր շուրջը, ստեղծարարության հնարավորություն է տալիս։

3.6 Գրական դատ (հարմար է խմբային աշխատանքով ամփոփիչ դասերի համար)

Բնականաբար, սա կազմակերպելուց առաջ աշակերտը բնագրին հնարավորիս պետք է ծանոթ լինի։ Մեծածավալ ստեղծագործությունները հատվածաբար կարելի հանձնարարել բոլորին, համառոտ պատմել տալ՝ միմյանց շարունակելով, մեկ-երկու նախադասությամբ յուրաքանչյուրի հատվածը գրել տալ ընդհանուր տեքստով։

Դիպաշարի և բովանդակության, կերպարային վերլուծությունից հետո նախապես դասարանը բաժանել խմբերի՝ դատապարտյալի դերում գտնվող կերպար, դատապաշտպան, դատապարտյալ, երդվյալ ատենակալներ, դատավոր։

Որպես վերջնարդյունք՝ բոլորը ըստ պատշաճի նորից կուսումասիրեն գեղարվեստական երկը, միմյանց կօգնեն նորից հասկանալու գաղափարն ու առաջադրված խնդիրները։

3.7 Դաս- բանավեճ

Տարբեր մարդկանց կողմից գեղարվեստական երկը տարբեր կերպ է ընկալվում՝ կախված անհատի մտածողությունից, ճաշակից, կրթությունից։ Ինչքան էլ որ տարբեր ու հակասական լինեն ընկալումները, այնուամենայնիվ գրական երկի հիմքում ընկած է օբյեկտիվ ճշմարտություն, որի բացահայտման համար շատ կարևոր է ընտրված մեթոդը։ Փորձը ցույց է տալիս, որ դաս-բանավեճի միջոցով ուսուցիչը կարող է իրականացնել իր առջև դրված խնդիրներն ու նպատակները։ Իսկ ո՞րն է դաս-

բանավեճի առավելությունը, ինչի՞ զարգացմանն ու ակտիվացմանն է այն նպաստում, ի՞նչ է խթանում, ի՞նչ է տալիս այն ուսուցչին և սովորողին։

Բանավեճը

ակտիվացնում է ակտիվացնում է աշակերտների ուսումնառության գործընթացը .

խթանում է ուսումնասիրվող նյութի ստեղծագործական ընկալումը և իմացական հետաքրքրությունը.

ապահովվում է ուսուցման գործընթացում ներգրավվածության բարձր մակարդակ միջոց է գիտելիքների ակտիվ փոխանցման.

զարգացնում է արագ արձագանքման ունակությունները.

զարգացնում է սեփական համոզմունքերն ու կարծիքը համապատասխան փաստարկներով ու տրամաբանությամբ պաշտպանելու կարողություն.

զարգացնում է սովորողների բանավոր խոսքի մշակույթը. զարգացնում է ինքնուրույն մտածողությունը.

զարգացնում է մենախոսական կուլտուրան .

մշակում է ուրիշի կարծիքն ու հայացքները հարգելու մշակույթ մշակում է բանավիճելու կուլտուրա

ձևավորում է փաստերի, ելույթների , դեպքերի ինքնուրույն

համադրման օբյեկտիվ եզրահագումներ կատարելու հմտություն. օժտում է աշակերտին նուրբ զգացողությամբ.

օգնում է , որ ընկերները հաղորդակից լինեն միմյանց մտքերի ,

դատողությունների , ինչու չէ, նաև կենսափորձի։

Եվ որպեսզի բանավեճը ծառայի իր նպատակին , այսինքն՝ ակտիվացնի, խթանի, ապահովի, զարգացնի , մշակի, ձևավորի վերը թվարկածները , պետք է խստորեն պահպանել բանավեճի կանոնները։

3.8 Գրական տեքստի հանգամանալից վերլուծություն, քննարկում

Սա կարելի է իրականցնել խմբային աշխատանքի միջոցով: Ըստ հարցերի՝ ձևավորել խմբեր՝

Պատմաբան	Կենսագիր	Հոգեբան	Լեզվաբան	Գրականագետ

Աշակերտները մեծ հնարավորություն են ստանում գրական տեքստն ուսումնասիրելու տարբեր տեսանկյուններից՝ պատմություն, հեղինակի կենսագրություն և ժամանակաշրջան, կերպարի արդիականություն, հոգեբանական և դաստիարակչական շերտեր, գարականագիտական տերմիններ, ավանդույթներ, լեզվաբանական գիտելիք, կյանքի հմտություններ: Այսինքն՝ աշակերտը գրականության միջոցով ընդլայնում է իր աշխարհայացքը, վերանայում արժեքային համակարգը, նորացնում և ամրապնդում իր գիտելիքները, դառնում է հայեցի լեզվամտածողություն կրող:

3.9 Բանաստեղծական տեքստի հետազոտություն

Բանաստեղծությունն ընթերցելուց, ներկայացնելուց հետո հանձնարարել աշակերտին լրացել հետևալ աղյուսակները՝

Դուրս գրել բառեր, որոնք արտահայտում են՝

Պատկեր	Ձայն	Զգացողություն

Դուրս գրել բառակապակցություններ , որոնք արտահայտում են՝

Պատկեր	Ձայն	Զգացողություն

Բանաստեղծական տեքստի հետազոտությունը, բառերի, պատկերների յուրացումը կիրառելով՝ գրել սեփական հորինվածքը:

Գրական երկից առանձին բառերի դուրսգրումը, դրանց կիրառմամբ նոր խոսք կառուցելը զարգացնում է ստեղծարար միտքը:

3.10 Պատկերացրու՛

Պատկերացրու՛, որ դու մասնագիտությամբ

- ուսուցիչ ես
- խոհարար ես
- ծրագրավորող ես
- հագուստի ձևավորող ես

Դու պետք է երկխոսության մեջ մտնես աշակերտի, ծնողի, պատվիրատուի, հաճախորդի հետ կամ ներկայցնես, թե ինչու ես ընտրել հենց այդ մասնագիտությունը:

Երեխային կտանք որոշակի առաջադրանք, ժամանակ, որ նա գնա, փնտրի, գտնի տվյալ բնագավառին բնորոշ բառապաշար, խոսք կազմի: Մտքի աշխատանք է: Պատկերացումների շարքը կարելի է շարունակել: Այս մեթոդը հանգիստ կարող ենք բերել գրականության դաշտ:

Օիրնակ՝ Պատկերացրու՛, որ դու Ասպրամն ես, նամակ ես գրում Աշոտ Երկաթին(կամ հակառակը):

Պատկերացրու՛, որ դու Եղիշե Չարենցն ես, եկել ես մեր օրեր՝ քո խոսքն ասելու:

Սա ձևավորվում է երևակայություն, մտածելու, վերլուծելու-համադրելու կարողություն:

Նա է վաղը իմ ստեղծարար քաղաքացին, որը ինքն է կերտում իր երկրի բարեկեցությունը, դառնում հզոր ու

Եզրակացություն

Հայոց լեզվի և գրականության դասաժամերին ստեղծագործական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների զարգացման ուսումնասիրություններն ու հմտությունները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացությունների՝

1. դասավանդման ավանդույթները ու վերաբերմունքը կարող են խթանել կամ ճնշել ստեղծարար ունակությունները։ Դա կախված է նրանից, թե ինչպիսի առաջադրանքների կիանդիպի երեխան ուսումնական գործընթացում։
2. միակ ճիշտ պատասխանի հետ կապված «փակ» հարցերը չեն ձևավորում ստեղծագործական մտածողություն, վերլուծելու-համադրելու կարողության այնպիսի որակներ, ինչպիսիք են հայտնի պատասխաններից խուսափելու հմտությունը, ինքնատիպությունը, մտքի անկախությունը, քննադատական վերաբերմունքը։
3. Այս գործառույթները կարելի է իրականացնել միայն «բաց» հարցերով, որոնք ենթադրում են ամբողջական անկախություն լուծման մեթոդի և մեծ թվով պատասխանների ընտրության հարցում։
4. Որպեսզի երեխան սովորի իր հնարավորությունների առավելագույն չափով, փորձում ենք նրան ստիպել սովորել սովորել, օգնել երեխային հավատալու իրեն, իր ունակություններին, վստահորեն կողմանորոշվել շրջակա իրականության պարզ օրենքներում և ավելի ակտիվ կիրառել իր գիտելիքներն առօրյայում։
5. Կրթության գերխնդիրը ստեղծարար մարդ կերտելն է։ Ստեղծարար մարդը հղանում է նոր գաղափարներ, դրանք կյանքիէ կոչում առանց վախենալու։
6. Թիմային աշխատանքի մշակույթ ձևավորել և զարգացնել աշակերտ- ուսուցիչ, աշակերտ-աշակերտ, ուսուցիչ-ուսուցիչ, ուսուցիչ-աշակերտ-ծնող-համայնք շղթայում։
7. Հայոց լեզվի և գրականության դասավանդման ընթացքում կիրավող մեթոդներն ու հնարները օգնում են կերտելու ստեղծարար մարդ՝ օժտված ստեղծագործական մտածողությամբ, վերուծելու-համադրելու կարողությամբ։

Օգտագործված գրականության ցանկ

1) Հոգեբանություն, Ա. Կովալյով, Ա. Ստեպանով, Ս. Շաբալին, Երևան 1970
2) Ինտելեկտի վերլուծություն, Ջո Փոլ Գիլդֆորդ, 1971
3) Է. Թորանս, Առաջնորդելով ստեղծագործական տաղանդը
4) Լեզվաքերականան նյութի ուսուցումը որպես կապակցված խոսքի միջոց, Թ. Ալեքսանյան, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, 2010թ.
5) Ինտելեկտը՝ որպես օժտվածության չափանիշ, Հոգեբանությունը և կյանքը, Զանգակ-97, 2009

Հավելված

Դասապլան

Ուսուցիչ՝ Նաիրա Պետրոսյան

Առարկա՝ Հայոց լեզու	Ամսաթիվ՝ 12.01.2021	Կիսամյակ՝ 2-րդ	Դասարան՝ 8ա

Թեմա՝	Նախադասության տեսակներն ըստ կազմության՝ պարզ և բարդ
Ամբողջական պատկեր՝	Գիտեն բառակապակցության տեսակները՝ ըստ գերադաս և ստորադաս անդամների, կարողանում են բառակապակցությունները դարձնել նախադասություն ստորոգման միջոցով: Ուսումնասիրելու են նախադասության տեսակներն ըստ կազմության: Հաջորդելու է համառոտ և ընդարձակ նախադասությունների ուսուցումը, որին նպաստելու է անդամ դարձող և չդարձող խոսքի մասերի տարբերակումը:
Դասի նպատակը՝	Ակադեմիական Կտարբերակեն պարզ և բարդ նախադասությունները Կտարբերեն պարզ և պարզ բաղադրիչ նախադասությունները Կկիրառեն կապակցված խոսքում

Վերջնարդյունքները	Աշակերտը կկարողանա. Թվարկել նախադասության տեսակներն ըստ կազմության Թվարկել նախադասության անդամ դարձող և չդարձող խոսքի մասերը Սահմանել <<ստորոգում>>, << պարզ>> և<< բարդ նախադասություններ>> եզրույթները Համեմատել պարզ և բարդ նախադասությունները Վերլուծել ըստ կազմության Կլրացնեն հարցաթերթ:
Խորացնել հայտորոշիչ գնահատում ապահովող հարցադրումների վերաբերյալ գիտելիքները, կառավարելով ժամանակը	Վերընթերցելու եմ համապատասխան գրականություն, նախապես կազմելու եմ թեմային վերաբերող հարցաշար՝ հստակ սահմանելով պատասխանելու համար պահանջվող ժամանակը:

Գործողություններ (ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն	Պլանավորած տարբերակում և ՈՒԳ ռազմավարություններ	Առանցքային հարցեր Հիմնական ստուգումներ (հանձնարարության վերջնարդյունքը նպաստում է դասի նպատակին)
	Աշակերտներ	**Ուսուցիչ**	
1ր	Ներկայացնելու են՝ ինչ է հանձնարարված:		Ապահովել դասի մուտքը
10ր	Հերթով կարդալու են տնային առաջադրանքները և ուղղելու են միմյանց:	Հետևելու եմ տնային առաջադրանքի ստուգմանը և ըստ անհրաժեշտության՝ ուղղելու եմ:	Բացատրել անհասկանալի հարցերը
6ր	Իմ հանձնարարությամբ դերային խաղի միջոցով ներկայացնելու են ընտանիքի ստեղծման, աճման մոդելը:	Հետևելու եմ դերային խաղին և կարգավորելու եմ ժամանակը:	Զարգացնել սովորածը կյանքին առնչելու հմտությունները

12ր	Հարցերին պատասխանելով՝ ներկայացնելու են պարզ և բարդ նախադասությունները՝ որպես միակազմ և երկկազմ ընտանիքների մոդել:	Առաջադրելու եմ հարցեր, որոնց միջոցով բացատրելու եմ դասը:	Զարգացնել հարցադրումների միջոցով վերլուծական մտածողություն, մտահանգելու, եզրակացնելու, համեմատելու կարողություններ
7ր	Գրավոր պատասխանելու են հարցերին:	Հանձնարարելու եմ պատասխանել հարցերին:	Ամփոփել ստացած գիտելիքները
2ր	Ստուգելու են արդյունքները տրամադրված պատասխաններով:	Ներկայացնելու եմ պատասխանները և հանձնարարելու եմ ստուգել արդյունքները:	Կատարել ստուգում
1ր	Կատարելու են ինքնագնահատում:	Խմբավորելու եմ պատասխանները: Հավաքելու եմ աշխատանքները հաջորդ դասին տարբերակված առաջադրանքներ տալու նպատակով:	Դիտարկել սեփական արդյունքները

1ր	Ստանալու են տնային առաջադրանք:	Հանձնարարելու եմ տնային աշխատանք:	Ամրապնդել ստացած գիտելիքները հաջորդ թեման յուրացնելու նպատակով
5ր	Գրելու են անդրադարձ:	Հավաքելու եմ անդրադարձները:	
Տերմիններ Գրագիտություն Թվագիտություն	Նախադասություն, ստորոգում, դիմավոր ստորոգյալ, բաղադրիչ, նախադասության անդամ: Կիրառելու են բանավոր և գրավոր խոսքում: Առաջնորդվելու են ստորոգյալների քանակի և վերջակետերի քանակի հաշվարկով:		
Գնահատում	Կատարվելու է ուսուցանող, հայտորոշիչ գնահատում, ինքնագնահատում:		
Տնային աշխատանք	Կատարելու են վարժություն 39-ը, 40-ը, 42-ը , որոնք նպաստելու են <<Պարզ համառոտ և ընդարձակ նախադասություններ>> թեմայի յուրացմանը:		
Դասին անդրադարձ	Դասն ընթացավ պլանավորածի համաձայն, եթե չհաշվենք անդրադարձ գրել չհասցնելը՝ տեխնիկական որոշ խնդիրների հետ կապված: Կարծում եմ՝ դասի բոլոր փուլերը շաղկապված էին, փոխկապակցված, ունեին համապատասխան ռիթմ: Դա վկայում էր աշակերտների մշտապես զբաղվածությունը, աշխատանքների դինամիկան: Առանձնակի ակտիվություն և հետաքրքրվածություն		

	նկատվեց դասի միջնամասում՝ նոր նյութի հաղորդման ընթացքում: Աշակերտների մի մասը՝ 26 ներկաներից 7-ը, կա՛մ փորձում էր չնկատվել, կա՛մ ցանկալի չափով չէր մասնակցում, ինչը իմ կողմից կանխվում էր հարցադրումներս հենց նրանց ուղղելով: Դասերի վերջում գրված անդրադարձներից պարզ դարձավ, որ պատճառը սխալվելուց խուսափելը և դասալսողների առկայությունն էր: Հաշվի առնելով այս 2 հանգամանքները՝ առաջիկա աշխատանքներումս կթիրախավորեմ այս խնդիրները: Նոր նյութի հաղորդումն ամբողջովին ընթացավ աշակերտների վերլուծական դատողությունների և եզրահանգումների հիման վրա, ինչը նրանց մեջ առաջ բերեց (մեջբերումը՝ իրենց անդրադարձներից) հաճույքի և վստահության զգացողություն: Հայտորոշիչ թեստի արդյունքները ինձ չբավարարեցին, բայց որոշակիորեն զարմացրին. Ամենաբարձր գնահատականներ ստացել էին 1 միջին և 1 ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներ, մինչդեռ լավ առաջադիմությամբ 1 աշակերտ ցուցաբերել էր 0 արդյունք: Պատճառները կուսումնասիրվեն, և կմշակվի համապատասխան ռազմավարություն: Իմ կողմից կատարվեց որոշակի դասակարգում՝ 1. ըստ յուրաքանչյուր աշակերտի սխալների քանակի 2. ըստ յուրաքանչյուր առաջադրանքի սխալների քանակի 3. ըստ ստացած միավորների քանակի 1-10 միավորանոց սանդղակով Նպատակը նոր նյութի յուրացվածության աստիճանի համակողմանի ուսումնասիրությունն է և չյուրացված մասերի վերաուսուցումը

	հաջորդ թեման հաղորդելիս:
Հարցաշար	Ստորև ներկայացնում եմ հայտորոշիչ հարցաշարը. 1. Որո՞նք են նախադասության անհրաժեշտ պայմանները. Ա. 1-ից ավելի բառեր Բ. ամփոփ միտք Գ. ստորոգում Դ. ավարտուն հնչերանգ 2.Տրվածը նախադասությու՞ն է, թե՞ բառակապակցություն. Լռությու՛ն, լռությու՛ն, լռությու՛ն անսահման... Ա. նախադասություն Բ. բառակապակցություն 3.Քանի՞ տեսակ են լինում նախադասություններն ըստ կազմության. Ա. պարզ և բաղադրյալ Բ. պարզ և բարդ Գ. պարզ, բարդ և ածանցավոր 4. Ինչո՞վ ենք առաջնորդվում նախադասությունների քանակը հաշվելիս.

	Ա. միայն վերջակետով Բ. վերջակետով, կախման կետերով, բազմակետով Գ. վերջակետով, միջակետով, ստորակետով 5. Ինչպիսի՞ նախադասություն է ընդգծվածը. Մտքերը թանձրանում էին՝ դառնալով ծանր և հյուծիչ. կապարե մի ամպ կուլ էր տալիս միակ աստղի համառությունը: Ա. պարզ Բ.պարզ բաղադրիչ Գ.բարդ 6. Ինչպիսի՞ն է տրված նախադասությունն ըստ կազմության. Ներսից լսվում էին տարօրինակ ձայներ՝ խլացնելով դրսի աղմուկը: Ա. պարզ Բ. բարդ 7. Քանի՞ բաղադրիչ նախադասություն կա տրվածում. Ես ձեզ ասում եմ՝ կգա Ոգու սով, Եվ դուք կքաղցեք ճոխ սեղանի մոտ... Ա. 1

	Բ. 2 Գ. 3 Դ .4